ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Ա02-20

Ք. Երևան 08.01.2020

Մի կողմից **«Ռումորս» ՍՊԸ**-ն, այսուհետև՝ **«Կատարող»**, ի դեմս՝ ընկերության տնօրեն **Մուշեղ Գևորգյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն** այսուհետև՝ **«Պատվիրատու»**, ի դեմս՝ ընկերության գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (հետագայում՝ **Կատարողը** և **Պատվիրատուն** միասին կանվանվեն **«Կողմեր»**) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

Պայմանագրում օգտագործվող հասկացություններ

1. **Ինտերնետային կայք.** http://www.rumorsmonitoring.com ինտերնետային կայք:
2. **Մեդիա տեղեկատվություն.** Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս գործող Ինտերնետային կայքում գրանցված լրատվական կայքերում տեղ գտած լուրեր, հայտարարություններ և այլ տեղեկություններ:
3. **Որոնման համակարգ.** Ինտերնետային կայքում տեղադրված, որոնման տարբեր սկզբունքների համակցմամբ Մեդիա տեղեկատվության որոնման համակարգ:
4. **Որոնման համակարգը օգտագործելու ծրագրային սահմանափակումներ.** ողջամիտ ծրագրային սահմանափակումներ, որոնք անհրաժեշտ են Որոնման համակարգի անվտանգ շահագործումն ու տեղեկատվության անվտանգությունն ապահովելու համար:
5. **Բարեխիղճ օգտագործում.** Ծածկանվան և Գաղտնաբառի որևէ ձևով տարածումը, Որոնման համակարգի ոչ բնականոն՝ այլ ծրագրերի, տեխնիկական միջոցների միջամտությամբ շահագործումը և Որոնման համակարգն օգտագործելու ծրագրային սահմանափակումների որևէ կերպով շրջանցելու փորձը համարվում է ոչ Բարեխիղճ օգտագործում:
6. **Համակարգի բազա.** հասանելի տեղեկատվության աղբյուրներից ստացված և պահպանված տեղեկատվություն:
7. **Ծանուցում.** կապի կամ էլեկտրոնային (այդ թվում Որոնման համակարգի) միջոցների գործածմամբ Պատվիրատուին ուղարկված հաղորդագրություն:
8. **Գործիք.** Ինտերնետային կայքում մեդիա տեղեկատվության որոնման, մշակման, խմբավորման և դասակարգման համար նախատեսված կոճակներ:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին Ինտերնետային կայքի միջոցով տրամադրել 1.3 կետում նշված սահմանափակումներով Որոնման համակարգից օգտվելու հնարավորություն:

1.3. Սահմանափակումները հետևյալն են՝ 40 բանալի բառ, 8 որոնման պրոֆիլ, բառերի փոփոխում, բազմալեզու որոնում, վերլուծություն, Facebook վարկանիշ, Facebook գրառում, ծանուցում, թարմացումներ, Youtube, տրամաբանական որոնում,սենտիմենտ,հաշվետվություններ,մեդիա արխիվ, խորհրդատու:

1.4. Ծառայությունները մատուցված են համարվում Կատարողի կողմից Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու և Պատվիրատուի կողմից այն ստորագրելու պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ապահովել Պատվիրատուի մուտքը Որոնման համակարգ, նրան պատկանող Ծածկանվան և Գաղտնաբառի միջոցով:

2.1.2. Որոնման համակարգի միջոցով ապահովել Համակարգի բազայում առկա Մեդիա տեղեկատվության հասանելիությունը պատվիրատուին:

2.1.3. Տրամադրել Ինտերնետային կայքից օգտվելու հնարավորություն սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում և պարտավորվում է այդ մասին ծանուցել Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով կամ հասարակ գրավոր ձևով: Էլեկտրոնային եղանակով Ծանուցումը Պատվիրատուին ուղարկվում է վերջինիս կողմից Ինտերնետային կայքում գրանցման ժամանակ տրամադրված էլ. փոստի հասցեով:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Կատարողին վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված չափով և կարգով:

2.2.2. Բարեխղճորեն օգտագործել իրեն պատկանող Ծածկանունը և Գաղտնաբառը, ինչպես նաև Որոնման համակարգը: Չշրջանցել Որոնման համակարգը օգտագործելու ծրագրային սահմանափակումները:

2.2.3. Որոնման համակարգում առկա տեղեկատվությունը (մեդիա տեղեկատվությունը) որևէ ձևով օգտագործելուց, տարածելուց կամ վկայակոչելուց առաջ ստուգել այդ տեղեկատվության համապատասխանությունը պաշտոնական աղբյուրներին:

2.2.4. Ինտերնետային կայքի Գործիքների միջոցով ձևավորված հաշվետվությունների և այլ տվյալների տարածելու, հրապարակելու կամ այլ կերպ հանրային օգտագործման դեպքում հղումը Որոնման համակարգին պարտադիր է:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1. Օգտվել Որոնման համակարգից 1.3 կետում նշված սահմանափակումներով:

2.3.2. Խափանումների դեպքում պահանջել դրանց շուտափույթ վերացումը:

2.4. Կատարողն իրավունք ունի՝

2.4.1. Հաշվառել ինտերնետային կայք կատարվող մուտքերը:

2.4.2. Արգելափակել Պատվիրատուի մուտքը Որոնման համակարգ՝ Որոնման համակարգի անվտանգության ապահովման ինչպես նաև անբարեխիղճ օգտագործումը կանխելու նպատակով՝ այդ մասին Ծանուցելով պատվիրատուին:

2.4.3. Արգելափակել Պատվիրատուի մուտքը Որոնման համակարգ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի կետերը չկատարելու դեպքում:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի ամսական գինը պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները մատուցելու համար կազմում է 80.000 (ութսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին վճարումն իրականացվում է յուրաքանչյուր ամսվա համար, մինչև հաջորդ ամսվա 15-ը սույն պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով էլեկտրոնային եղանակով Կատարողի կողմից Պատվիրատուին դուրս գրված հաշվարկային փաստաթղթի հիման վրա:

3.3 Պատվիրատուի կողմից Որոնման համակարգից օգտվելու ժամանակահատվածը ավարտվելուց հետո, վերջինս լռելյայն անցնում է ինտերնետային կայքում սահմանված առավելագույն սահմանափակումներով օգտագործմանը, որն անվճար է:

4. Կողմերի պատասխանատվությունները

4.1. 3.2 կետում նշված ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար օրական գնի 0,1 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան պայմանագրի գնի 10%-ը:

4.2. Կատարողը պատասխանատու չէ համակարգում առկա տեղեկատվությունների (մեդիա

տեղեկատվություն) Պատվիրատուի կողմից օգտագործելու ընթացքում պաշտոնական աղբյուրների հետ հնարավոր անհամապատասխանության համար:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, ինտերնետային կապի դադարեցումը, ինտերնետային կայքի սպասարկման (hosting) դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ պայմանագրի լուծման համաձայնագիր կնքելու միջոցով՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում 2020թ. հունվարի 1-ից և գործում է մինչև 2020 թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

7.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

7.3. Կողմերից ոչ մեկը չի կարող հատկացնել կամ փոխանցել որևէ երրորդ կողմի սույն Պայմանագրից բխող իրավունքները, պարտականությունները կամ պարտավորվածությունները՝ առանց մյուս կողմի գրավոր համաձայնության:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

8. Կողմերի տվյալները

8.1 ԿԱՏԱՐՈՂ՝
«Ռումորս» ՍՊԸ

ՀՀ ք,Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17,199
ՀՎՀՀ 00895296
h/h19300-55248900100
«Կոնվերս բանկ»

Տնօրեն՝ _____Մ. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.

8.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ 01540062
h/h 2470102796740000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ _____Մ.Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.